

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՄԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ 15 -Ն

19/12/2011

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԻ
 ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
 ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՔԱԶԱՓԵՐԸ
 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրուքաչափերը.

ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՑՔԱԶԱՓԵՐԸ /ՀՀ ԴԲԱՄ/
Համայնքի ղեկավար		150000

Հայեցողական պաշտոններ

Խորհրդական	1	82000
------------	---	-------

Համայնքային ծառայության պաշտոններ

Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար /1.2.1 /	1	100000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3.1 /	1	81000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1.1 /	1	80000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2.1 /	1	65000
Համայնքի ղեկավարի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3.1 /	1	55000

Քաղաքացիական աշխատողներ

Մշակույթի տան տնօրեն	1	55000
Գրադարանավար	1	45000

Տեխսպասարկման անձնակազմ

Պահակ	1	45000
Հավաքարար	1	45000

Կողմ -4

Դեմ - 0

Ձեռնպահ - 0


Հ. Հարությունյան *[Signature]*
 Վ. Սարտիրոսյան *[Signature]*
 Մ. Մկրտչյան *[Signature]*
 Մ. Մուրադյան *[Signature]*



Կավար՝

[Signature]

Ս. Թարթիկյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՄԻՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ 16-Ն

19/12/2011

2012թ. -ի ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ
 ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ
 ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջով և <Տեղական տուրքերի և վճարների մասին > ՀՀ օրենքով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների ներառյալ՝ ոչ հիմնական շինության տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբեկտների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական <ամառանոցային > տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես եւնեցող և հասարակական և արտադրական նշանակության օբեկտների համար՝ 7500 դրամ.

բ/ սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար՝ 15000 դրամ.

բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար՝ 25000 դրամ.

բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար՝ 35000 դրամ. ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար՝ 1500 դրամ.

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբեկտների համար՝ 2500 դրամ

2. Համայնքի վրչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբեկտների Վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների

(բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագրով՝

ա/ չի նախատեսվում կցակառուցների, վերնակառուցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործարական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ :

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

5. Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 դրամ

5. Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 դրամ
6. ծխախետի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 դրամ :
7. Համայնքի տարածքում՝
ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ .
8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝ այլ արտաքին գովազդի համար 500 դրամ .
9. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար 2000 դրամ :

Կողմ - 4

Դեմ - 0

Ձեռնպահ - 0

Հ. Հարությունյան *Կոչ* *Սեպուհյան*
 Վ. Սարտիրոսյան .. *Կոչ* *Սարտիրոսյան*
 Մ. Մկրտչյան *Սարտիրոսյան*
 Մ. Մուրադյան *Կոչ* *Սեպուհյան*



Ս. Թարթիկյան

Ս. Թարթիկյան

Ս. Թարթիկյան